Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
օգոստոսի 12-ի N 1324-Ն որոշման

Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 293.1-ին հոդվածի 2-րդ մասի՝ օրինապահ հարկ վճարողին հավաստագիրը տրամադրվում է ավելացված արժեքի հարկ վճարող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից դիմումը ներկայացնելու օրն ընդգրկող տարվան նախորդող տարվա հունվարի 1-ից, մինչև դիմումը ներկայացնելու օրվան նախորդող ամսվա վերջին օրը ներառող ժամանակահատվածում (այսուհետ՝ դիտարկվող ժամանակահատված) իրականացված փաստացի գործունեության արդյունքների համար, հետևյալ չափանիշներին միաժամանակ բավարարելու դեպքում՝

1) դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ և դիտարկվող ժամանակահատվածի բոլոր օրերին հարկ վճարողը հանդիսացել է ավելացված արժեքի հարկ վճարող.

2) հարկ վճարողը դիտարկվող ժամանակահատվածի կեսից ավելի ամիսների համար հաշվարկել է ԱԱՀ (այդ թվում՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ գումար).

3) դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող (հաշվառվող), Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների գծով հարկ վճարողի մոտ ժամկետանց պարտավորությունների (հարկի, տուրքի, վճարի, տույժի, տուգանքի, ինչպես նաև վնասի հատուցման և ծախսերի փոխհատուցման գումարների) բացակայություն.

4) դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային և մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկ վճարողը պետք է ներ-

կայացրած լինի դիտարկվող ժամանակահատվածը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար նախատեսված բոլոր հաշվարկները, հայտարարագրերը, հաշվետվությունները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները, որոնց ներկայացման ժամկետը լրացել է.

5) դիտարկվող ժամանակահատվածը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար սահմանված կարգով և ժամկետներում հարկ վճարողի կողմից վճարված լինեն բոլոր հարկերը, տուրքերը և (կամ) վճարները (այդ թվում՝ կանխավճարները).

6) դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում օրենսգրքի 412-րդ կամ 416-րդ հոդվածների պահանջներից որևէ մեկով մեկից ավելի անգամ խախտման բացակայություն.

7) հարկային և (կամ) մաքսային մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի (պաշտոնատար անձի) նկատմամբ արձանագրած իրավախախտումների բացակայություն: Սույն չափանիշի իմաստով իրավախախտում է համարվում նաև համալիր հարկային ստուգման ընթացքում ստուգվող ժամանակահատվածի համար հարկ վճարողի կողմից հաշվարկների (հայտարարագրերի, այդ թվում՝ ճշտված) ներկայացումը և (կամ) ընդունված վարչական ակտերով (այդ թվում՝ ստուգման ակտերով կամ ուսումնասիրության արձանագրություններով) արձանագրված իրավախախտումները՝ անկախ այդ վարչական ակտերի անբողոքարկելի համարվելու համար օրենքով սահմանված ժամկետներից կամ այդ ակտերի բողոքարկված լինելու հանգամանքից.

8) դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային կամ մաքսային մարմինների կողմից հարուցված և չավարտված քրեական կամ վարչական (այդ թվում՝ ստուգման կամ արտազնա ուսումնասիրության) վարույթների բացակայություն:

2. Սույն կարգի 1-ին կետի 4-րդ, 5-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված չափանիշները համարվում են բավարարված, եթե համապատասխան ժամանակաշրջանի ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով արձանագրված իրավախախտումների արդյունքում հաշվարկված կամ հարկային (մաքսային) մարմինների կողմից լրացուցիչ առաջադրված պարտավորությունների հանրագումարը

(այդ թվում՝ ստուգման (ուսումնասիրության) ժամանակաշրջանում ստուգվող (ուսումնասիրվող) ժամանակաշրջանի համար հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվարկների (հաշվետվությունների), ինչպես նաև ճշտված հաշվարկների, որոնց արդյունքում առաջացել է հարկային պարտավորություն կամ ավելացել է հարկային պարտավորությունը և (կամ) նվազել է հաշվանցվող (պակասեցվող) գումարը) չի գերազանցում դիտարկվող ժամանակահատվածի համար հարկ վճարողի կողմից ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված ԱԱՀ-ով հարկման բազայի 0,05 %-ը, բայց ոչ ավելի, քան 1 մլն դրամը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.08.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ